

1.2.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2002թ. հունվար-օգոստոսին, ընթացիկ գներով, բոլոր գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 182.9 մլրդ.դրամ, որը 2001թ. մակարդակը գերազանցել է 1.2%-ով: 2002թ. օգոստոսի համախառն արտադրանքը կազմել է հուլիսի 108.7%-ը (համադրելի գներով):

Հանրապետությունում շարունակվում են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքահավաքի աշխատանքները: Օպերատիվ տվյալներով, 01.09.2002թ. դրությամբ գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքը (բացառությամբ հացահատիկային և հատիկալընդեղենային մշակաբույսերից ու պտղից) գերազանցել է 01.09.2001թ. մակարդակը: Այսպես. կարտոֆիլի համախառն բերքն ավելացել է 1.8 հազ.տոննայով կամ 2.2%-ով, բանջարեղենինը, համապատասխանաբար՝ 13.9 և 6.4%-ով, բոստանինը՝ 6.5 և 18.8%-ով և խաղողինը՝ 0.1 հազ.տոննայով կամ 6.7%-ով: Սակայն, հացահատիկային և հատիկալընդեղենային մշակաբույսերի համախառն բերքը զիջել է 01.09.2001թ. մակարդակը 25.9 հազ. տոննայով կամ 8.4%-ով և պտղինը՝ 9.6 հազ. տոննայով կամ 32.4%-ով:

2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ հացահատիկային և հատիկալընդեղենային մշակաբույսերի համախառն բերքի նվազումը բացատրվում է 2002թ. տևական տեղումներով (հորդառատ անձրևներ, կարկուտ, իսկ առանձին վայրերում՝ ձյուն), ինչն իր հերթին խոչնդոտել է գարնանացանի բնականոն ընթացքը: Դրանով պայմանավորված, ցանքի ժամկետներն երկարաձգվել են շուրջ 20-25 օրով և համապատասխանաբար ուշացումով են իրականացվում նաև բերքահավաքի աշխատանքները:

Պտղի համախառն բերքի կրճատումը 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ հիմնականում պայմանավորված է 2002թ. մասնակի ցրտահարություններով, ինչպես նաև ծաղկման շրջանում տեղած անձրևներից փոշոտումը լավ չընթանալու հետևանքով:

Անասնապահական մթերքի արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2002թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ (հաշվարկային տվյալներով)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) ¹ , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2002թ.	2002թ. % 2001թ. նկատմամբ	2002թ.	2002թ. % 2001թ. նկատմամբ	2002թ.	2002թ. % 2001թ. նկատմամբ
Արագածոտն	4.8	100.0	43.0	101.4	15.5	100.0
Արարատ	3.9	105.4	29.7	115.1	21.8	99.1
Արմավիր	4.1	107.9	24.3	91.4	20.4	79.7
Գեղարքունիք	7.7	104.1	69.8	109.9	21.2	90.2
Լոռի	4.6	97.9	42.5	97.7	11.7	95.9
Կոտայք	6.0	117.6	38.0	97.2	138.5	110.6
Շիրակ	6.4	106.7	56.7	108.2	22.3	101.8
Սյունիք	3.5	97.2	32.6	102.8	9.3	89.4
Վայոց ձոր	1.7	89.5	14.8	100.0	6.9	107.8
Տավուշ	3.4	97.1	27.3	101.5	16.0	98.8
ք. Երևան	1.9	475.0	2.5	113.6	30.3	118.8
Ընդամենը ՀՀ	48.0	106.9	381.2	103.3	313.9	103.2

Գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի հաշվարկային տվյալներով, 2002թ. հունվար-օգոստոսին իրացվել է 48.0 հազ. տոննա (կենդանի քաշով) անասուն և թռչուն, որը գերազանցել է 2001թ. ցուցանիշը 3.1 հազ. տոննայով կամ 6.9%-ով, կաթի արտադրությունը՝ 12.2 հազ. տոննայով կամ 3.3%-ով, ձվինը՝ 9.6 մլն. հատով կամ 3.2%-ով:

¹ Ներառյալ ներքին սպառումը:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2002թ. հունվար-օգոստոսին»